Կրակը մի հսկայ վիշապի նման լափում էր ամրոցի զարդարանքները եւ, ինչ որ չէր կարողանում կլանել, դուրս էր ժայթքում: Դրսում, յուսահատ անկարգութեան մէջ, խառնուած էին միմեանց հետ ամրոցի շարժական հարստութիւնները՝ ձիաները, որսորդական շները, յարեմի գեղեցկուհիները, սեւամորթ ներքինիները, իսկ ներսում, ինչ որ փախչել չէր կարող, այրւում էր... Այրւում էր մետաքսը, այրւում էր շալը, այրւում էին արծաթն ու ոսկին...

Երբեմն լսւում էին խուլ նետումներ, եւ քամին բերում էր վառօդի անախորժ հոտը... երբեմն հրեղէն լուսաւորութեան մէջ երեւում էր սրերի փայլը... մարդիկ կանգնում էին, մարդիկ ընկնում էին... Այնտեղ խոցոտում էին միմեանց...

Հրդեհը աւելի տարածուեցաւ: Այժմ այրւում էին ամրոցի շրջապատի դարեւոր ծառերը: Լուսաւորութիւնը, ճառագայթելով ձնային սպիտակ հարթադաշտի վրայ, աչք էր շլացնում:

Այդ միջոցին միեւնոյն ձիաւորները, որ դուրս եկան արաբական մինարեթից, յայտնուեցան պայծառ, բոսորային լուսաւորութեան մէջ: Ձիաւորներից մէկին ետեւից գրկած ունէր մի մանկահասակ կին: Ձին արագութեամբ վազում էր, պատառելով ձիւնի թանձրութիւնը: Եթէ սառցային փոշին արգելք չլինէր, կարելի էր ճանաչել Կարօյի այրական դէմքը: Նրա ետեւից ոտքով վազ էին տալիս երկու արարածներ՝ նոյն պառաւը եւ նոյն մանկահասակ օրիորդը, որ, ջահերը ձեռներին, առաջին անգամ յայտնուեցան աշտարակների բարձրութեան վրայ: Դրանցից մէկը Հիւբբին էր, միւսը՝ պառաւ Սուսանը...

Հիւբբին առեց վրէժը... Հիւբբին ազատեց մօրը, որ տարիներով փակուած էր Դինբուլիների անմատչելի ամրոցի մէջ...

ԼԴ. ԱՆՅԱՅՏ ԱՊԱԳԱՅ

Ա

Անցան տարիներ, որքա՞ն տարիներ, յայտնի չէ: Գարնանային արեգակը դեռ նոր սկսել էր քաղել ճոխ բուսականութեան տերեւներից վաղորդեան ցօղը, դեռ նոր քնէած թռչունները հնչեցնում էին լեռների, անտառների թաւուտները իրանց ուրախ ձայներով: Օդը լցուած էր նուրբ, հոգեպարար մառախուղով: Արեգակի առաջին ճառագայթները, անցնելով այդ մառախուղի միջով, կարծես անցնում էին սպիտակ շղարշի թափանցիկ տարածութեան